ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՆԳԿՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «08» դեկտեմբերի 2017թ.

2017թ-ի դեկտեմբերի 08-ին՝ ժամը 13:00-ին, «Նորավանք» ԳԿՀ-ի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Նժդեհ 23/1 հասցեում, տեղի ունեցավ ՆԳԿՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Սամվել	Մանուկյան	Գնահատող հանձնաժողովի նախագահ.
Լուսինե	Բաղրամյան	Գնահատող հանձնաժողովի գնահատող անդամ.
Կարեն	Վերանյան	Գնահատող հանձնաժողովի գնահատող անդամ.
Արեստակես	Սիմավորյան	Գնահատող հանձնաժողովի բացող անդամ.
Դիանա	Գալստյան	Գնահատող հանձնաժողովի բացող անդամ:

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Անի	Բազեյանը	«Նորավանք» ԳԿՀ-ի գնումների մասնագետ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Սամվել Մանուկյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՆԳԿՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ՆԳԿՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ՆԳԿՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ/ՆԵՐԻ/ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ/ԵՐԻ/՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Անի Բազեյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ՆԳԿՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի/ների/ մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը ուղարկվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. ՆԳԿՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի/ների/ մասով 1-ին տեղը զբաղեցրած «ՀԱՅԿԱՐԼԻ» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 44-րդ կետի՝

Որոշվեց՝

1. Հաստատել ՆԳԿՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) «ՄԻՍՄԱ» ՍՊԸ՝ բավարար.
2) «ԹԱՍԿ» ՍՊԸ՝ բավարար.
3) «ՎԱ-ՀԱ» ՍՊԸ՝ բավարար.
4) «ՀԱՅԿԱՐԼԻ» ՍՊԸ՝ բավարար
5) Ա/Ձ Արման Ասմանգուլյան՝ անբավարար:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ՆԳԿՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ՆԳԿՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «ՀԱՅԿԱՐԼԻ» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ս. Մանուկյան _____

Հանձնաժողովի անդամ՝

Լ. Բաղրամյան _____

Կ. Վերանյան _____

Ա. Սիմավորյան _____

Դ. Գալստյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Բազեյան _____